Արցախի Տիգրանակերտն ու ֆինանսական խնդիրները

Տիգրան Մեծ արքայի անունը կրող 6 քաղաք կա Արեւմտյան Հայաստանում, եւ ահա պարզվում է՝ Տիգրանակերտ անունով քաղաք գոյություն ունի նաեւ Արցախում: Երեկ «Հայացք» ակումբի հյուրերն էին Արցախի Տիգրանակերտ քաղաքի պեղումների արշավախմբի ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր Համլետ Պետրոսյանը, ճարտարապետ Լյուբա Կիրակոսյանը, հնագետ Աղավնի Ժամկոչյանը: Տիգրանակերտի պեղումներն սկսվել են դեռեւս 2001 թվականին, տարբեր ժամանակահատվածի ընդմիջումներով շարունակվում են մինչ օրս: Աշխատանքների դանդաղ ընթացքի պատճառը ֆինանսական խնդիրներն են: Հ. Պողոսյանը դիմել է վարչապետ Սերժ Սարգսյանին, եւ մերժում ստացել, դիմել է «Viva Cell» ընկերությանը՝ որեւէ պատասխան չի ստացել: Հ. Պետրոսյանը կարեւոր է համարում հնագույն քաղաքը աշխարհին ներկայացնելու գործընթացը, հատկապես այն դեպքում, երբ ադրբեջանցիները նորից «ակտիվացել» են եւ ուզում են ապացուցել, որ հայերն Արցախում ընդամենը հյուր են: Այդ իսկ պատճառով նա ստեղծել է www.tigranakert.am կայքը, որի աշխատանքները նույնպես դադարեցվել են ֆինանսական խնդիրների պատճառով:

Դեռեւս 7-րդ դարից պահպանված հայկական պատմական աղբյուրներում եղել են տեղեկություններ, որ Արցախում եւ Ուտիքում կա Տիգրանակերտ անվամբ քաղաք. «Մենք փորձեցինք հնագիտորեն ուսումնասիրել, գտնել այդ քաղաքը, սկզբում դա մեզ առասպել էր թվում: Սակայն մենք հայտնաբերեցինք Տիգրան Մեծի ժամանակաշրջանից պահպանված ժայռափոր աշտարակը, բազմաթիվ խեցեղեններ, Տիգրանակերտի միջնաբերդը, որը շարված է տիպիկ հելլենիստական դարաշրջանի ճարտարապետական ոճով: Շահբուլա անունը կրող աղբյուրը, որը բառացի նշանակում է արքայի աղբյուր: Այս ամենը վկայում է, որ Արցախի Տիգրանակերտն իսկապես հզոր քաղաք է եղել»,-ասաց Հ. Պողոսյանը:

Հնագույն Տիգրանակերտ քաղաքը 14 դար անընդմեջ գոյություն է ունեցել, այդ իսկ պատճառով քաղաքի ավերակներում, շրջակա տարածքներում պահպանվել են ոչ միայն հելլենիստական դարաշրջանին պատկանող հնագույն իրեր, ամրոցի փլատակներ, այլեւ հայտնաբերվել է նաեւ վաղ միջնադարյան մի ամրոց, կան վաղ միջնադարի բազմաթիվ քրիստոնեական տաճարներ, 7-րդ դարի քրիստոնեական եկեղեցի, որն ադրբեջանցիները վերականգնել են՝ համարելով այն աղվանական, ջնջել են հայկական արձանագրությունները, խաչի նշանը, սակայն պեղումներ կատարող խմբին հաջողվել է հայտնաբերել բազմաթիվ արձանագրություններ, որոնք այժմ տարվել են ուսումնասիրության: Երկու խոշոր բնակավայր է հայտնաբերվել, որը ժամանակագրության առումով չէր կարող Տիգրանակերտի մաս չկազմել: Այս տարի հունիսից պետք է վերսկսվեն պեղումների աշխատանքները, իսկ թե ինչ միջոցներով՝ դեռեւս հայտնի չէ:



Աշխեն ՔԵՇԻՇՅԱՆ
ashkhen@hraparak.am